

## Հանրային գնումների տեղեկագիր, թողարկում 4

### 1. Օրենսդրական զարգացումների մոնիտորինգ

Մոնիտորինգի ժամանակահատվածում (2016թ. հոկտեմբերի 1-ից մինչև 2017թ. փետրվարի 28) օրենսդրական հիմնական զարգացումը դա գնումների մասին նոր օրենքի ընդունումն էր: Օրենքն Աժ կողմից ընդունվեց 2016թ. դեկտեմբերի 16-ին, հրապարակվեց 2017թ. հունվարի 25-ին և ուժի մեջ կմտնի 2017թ. ապրիլի 25-ին: Ինչպես նշվել էր նախկինում (տե՛ս հանրային գնումների տեղեկագրի երկրորդ թողարկումը) Թրանսփարենսի Ինթերնեշլ հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻՀԿ) դեռևս անցյալ տարվա մարտին ներկայացրել էր այդ օրենքի առաջին նախագծի վերաբերյալ իր դիտողություններն ու առաջարկությունները որոնք տեղադրված են սույն էջում (տե՛ս [https://transparency.am/gnumner/legislation/TIAC\\_comments-%20LP.pdf](https://transparency.am/gnumner/legislation/TIAC_comments-%20LP.pdf)): Հետագայում ԹԻՀԿ-ը կազմակերպեց նաև այդ նախագծի հանրային բաց քննարկումը, որը տեղի ունեցավ 2016թ. հունիսի 28-ին (տե՛ս միջոցառման մասին ԹԻՀԿ հաղորդագրությունը <https://transparency.am/hy/news/28-06-2016>):

ՀՀ գնումների նոր օրենքն ավելի թափանցիկ կարող է դարձնել հանրային գնումների համակարգը՝ ընդլայնելով այն տվյալների բազմությունը, որոնք պարտադիր կերպով պետք է հրապարակվեն գնումների պաշտոնական կայքէջում: Մյուս կարևոր փոփոխությունը դա գնումների ընթացակարգերի թվի կրճատումն է՝ նախկին 7-ի փոխարեն նոր օրենքով սահմանված է 4 ընթացակարգ, որը միտված է պարզեցնելու ընթացակարգի ընտրությունը գնման գործընթացին մասնակցել ցանկացող տնտեսվարող սուբյեկտի համար: Նոր օրենքով մտցվում է նաև իրական սեթականատերերի ինստիտուտը, որը նույնպես կարելի է համարել դրական, չնայած ոչ բավարար քայլ: Եվ վերջապես, նախատեսվում է մտցնել բողոքարկման նոր համակարգ, որը, ենթադրվում է, որ կլինի ավելի անկախ, քան ներկայիս համակարգն է: Այն նաև լինելու է մշտական գործող և մասնագիտացված, ի տարբերություն ներկա համակարգի, երբ բողոքարկման խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում էին հասարակական հիմունքներով՝ առանց վարձատրության:

2017թ. հունվարի 25-ին ՀՀ ֆինանսների նախարարի մոտ կայացավ նախարարի և նախարարության համապատասխան պաշտոնատար անձանց հանդիպումը հանրային գնումների ոլորտում ակտիվ դերակատարում ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկումների արդյունքում ձեռք բերվեց պայմանավորվածություն, որ հանդիպմանը մասնակցող հասարակական կազմակերպությունները կներկայացնեն իրենց առաջարկություններն՝ ուղղված օրենքի հետագա բարելավմանը: Փետրվարի 10-ին ԹԻՀԿ-ը ֆինանսների նախարարությանն ուղարկեց իր առաջարկությունները, որոնք նաև տեղադրված են սույն էջում՝ «Հրապարակումներ» բաժնում: Այդ առաջարկությունները միտված են էլ ավելի սահմանափակելու մեկ անձից կատարվող գնումները, ավելի ընդլայնելու համակարգի թափանցիկությունը, սահմանափակելու միջնորդավորված գնումները, օրենքից հանելու այնպիսի ձևակերպումները, որոնք կարող են բերել կամայական մեկնաբանությունների, ավելի արդյունավետ դարձնելու գնահատման հանձնաժողովներում և բողոքարկման խորհրդում փոխկապակցված անձանց վեր հանումը, բացառելու կամ սահմանափակելու իրական սեփականատերերի ներգրավումը գնման գործընթացներում և հստակեցնելու շահերի բախումը:

Մոնիտորինգի ժամանակահատվածում ՀՀ կառավարությունն իր 2017թ. փետրվարի 9-ի թիվ 104-Ն որոշումով (ուժի մեջ մտավ 2017թ. փետրվարի 25-ին) փոփոխություններ և լրացումներ կատարվեցին հանրային գնումները կանոնակարգող հիմնական ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման մեջ: Այդ որոշմամբ արված առավել կարևոր փոփոխություններն էին ԵԱՏՄ երկրների արտադրության ապրանքների մատակարարման դեպքում

այդպիսի ապրանքներ առաջարկող մասնակցին տրվող 15 տոկոս գնային առավելության վերաբերյալ դրույթի հանումը, պետության կարիքների համար կենտրոնացված կարգով գնման գործընթացի կազմակերպման կանոնակարգումը և էլեկտրոնային եղանակով իրականացվող գնումների դեպքում պայմանագրի կատարման արդյունքի հետ կապված գործառնությունների իրականացումը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով (վերջին փոփոխությունն ուժի մեջ կմտնի 2017թ. ապրիլի 1-ից):

## 2. Պետական գնումներին առչվող պաշտոնական կայքերի մոնիտորինգ

2016թ. հուլիսի 7-ի Կառավարության նիստին վարչապետ Յուրի Աբրահամյանը հայտարարել էր, որ Ֆինանսների նախարարությունը մշակել է գնումների հաշվետվողության համապատասխան մոդուլ ([www.armeps.am/ppcm](http://www.armeps.am/ppcm)), որը հանրությանը հասանելի կլինի և պետական կառավարման մարմինների կողմից շահագործվում է հուլիսի 1-ից, իսկ քաղաքները դրան կմիանան այս տարվա սեպտեմբերի 1-ից: Սակայն մինչև այժմ կայքը վերջնական տեսքը չի ստացել և դեռ կատարվում են ընթացիկ աշխատանքներ: Այդ պատճառով կենտրոնական 2016թ. հիմնական պաշտոնական էլեկտրոնային տեղեկատվական հարթակներին՝ [e-gov.am](http://e-gov.am)-ին և [gnumner.am](http://gnumner.am)-ին:

2016թ. բանակցային ընթացակարգ առանց նախապես հայտարարության (այսինքն մեկ անձից գնումների) 6898 պայմանագիր է դրված [E-gov.am](http://E-gov.am) կայքում: [Armeeps.am/ppcm](http://Armeeps.am/ppcm)-ում հրապարակված է 1183: Հարցը նրանում է որ, [armeps.am/ppcm](http://armeps.am/ppcm)-ում հրապարակված մեկ անձից գնումների առնվազն ընդհանուր 345 մլն պարտավորություն առաջացրած 338 պայմանագիր չկա [e-gov.am](http://e-gov.am)-ում, ինչը փաստում է [e-gov.am](http://e-gov.am)-ի տվյալների թերի լինելը: Մեկ անձից կնքված ոչ բոլոր պայմանագրերն են տեղադրված կայքում: Վերոնշյալ չհրապարակված պայմանագրերի շուրջ 92 տոկոսը ներկայացուցչական ծախսերի և գործուղումների պայմանագրեր են:

Բացի այդ, ըստ ԳԱԿ-ի 2016թ. 1-9 ամիսների հաշվետվության առանց հայտարարության բանակցային ընթացակարգով՝ մեկ անձով գնումների թիվը հասնում է 14593-ի, այնինչ [e-gov.am](http://e-gov.am) կայքում 2016թ. առաջին 3 եռամսյակի ընդամենը 2560 կնքված պայմանագիր է միայն հրապարակված:

[E-gov.am](http://E-gov.am) կայքից տվյալներ հավաքագրելու ընթացքում պարբերաբար ավելանում էին պայմանագրեր ավելի վաղ կնքված պայմանագրեր, որը ավելորդ դժվարություններ էր ստեղծում:

Բազմաթիվ թերություններ կան նաև [Gnumner.am](http://Gnumner.am) կայքում, որոնցից մի քանիսը հարկ ենք համարում նշել:

**«Գնահատող հանձնաժողովի բացման նիստի արձանագրությունները»** բաժինը ակնհայտորեն թերանում է հաշվետվողականության հարցում: Ընթացակարգերի արձանագրությունները կամ բացակայում են, ինչպես օրինակ սահմանափակ ընթացակարգի դեպքում, կամ շատ թերի են, օրինակ բաց ընթացակարգի դեպքում պետական հիմնարկների գնումների բաց ընթացակարգով գնումների գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրություններից տեղադրված են ընդամենը 15-ը, այնինչ ըստ ԳԱԿ-ի զեկույցի առաջին 3 եռամսյակում բաց ընթացակարգով կայացած գնումների թիվը հասնում է 94-ի: Նույն պատկերն է նաև առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների դեպքում, իսկ հանրային կազմակերպությունների ոչ մի արձանագրություն որևէ ընթացակարգով տեղադրված չէ:

**«Բողոքարկում»** բաժնում հրապարակված 133 բողոքներից 17 տոկոսի մասին կայացված որոշումները չկան կայքում տեղադրված, ինչը փաստում է ամբողջական տվյալների հրապարակայնության թերության մասին:

Նույն բաժնում կա բողոքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, որը քանակապես չի համընկնում մեր մոնիտորինգի արդյունքում նույն կայքի բողոքների մասին հայտարարությունների ու դրանց մասին որոշումների բաժիններից հավաքված տվյալների հետ:

Ընդհանուր առմամբ, gnumner.am կայքից որևէ ինֆորմացիա կնքված պայմանագրերի հայտարարությունների և այլնի մասին ստանալը բավականին բարդ և երկար գործընթաց է՝ որոնման համակարգի հետ կապված խնդիրների, ինչպես նաև ըստ տարիների և ըստ պատվիրատուների չտեսակավորված լինելու պատճառով:

### 3. Մեկ անձից գնումների մոնիտորինգ

ՀՀ էլեկտրոնային կառավարման՝ e-gov.am կայքի «Մեկ անձից կատարվող գնումներ» ենթաբաժնում 2016թ. հրապարկվել է առանց գնումների հայտարարության բանակցային ընթացակարգի համաձայն կնքված 6898 պայմանագիր: Ուշագրավ է, որ 2015թ. մեկ անձից կատարված գնումներով պայմանագրերի թիվը գրեթե կրկնակին էր՝ 12358 պայմանագիր: Զանակային տարբերությունը մեծապես կախված է կրթական ծառայությունների պայմանագրերի բացակայությամբ: 2016թ.-ի հանրակրթական դպրոցների հետ պայմանագրերը դեռևս չեն տեղադրվել կայքում:

2016թ.-ին e-gov.am կայքում դրված պայմանագրերի ընդհանուր պայմանագրային գինը կազմում է 98,432 մլն ՀՀ դրամ: Գնումների աջակցման կենտրոնի տարեկան հաշվետվության պատրաստ չլինելու կապակցությամբ համեմատությունները տեղ չեն գտնի այս տեղեկագրում:

Մեր կողմից առանձնացվել է մեկ անձի հիմքով կնքված պայմանագրերի երկու խումբ՝ մրցակցության բացակայությամբ պայմանավորված գնումների և այլընտրանքային առկայության պարագայում ոչ մրցակցային ընթացակարգով իրականացված գնումների պայմանագրերի: Մրցակցության բացակայությամբ պայմանավորված գնումների պայմանագրերը խմբավորվել են հետևյալ բաժիններում՝

- Առողջապահական ծառայությունների ձեռքբերումը,
- Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրություն,
- Էլեկտրաէներգիայի մատակարարում,
- Բնական գազի բաշխում և գազասպասարկում,
- Ջրի մատակարարում,
- Փոստային ծառայություններ:

**Աղյուսակ 1. Մրցակցության բացակայությամբ պայմանավորված գնումների պայմանագրերը մեկ անձից կատարված գնումների կազմում**

Մրցակցության բացակայությամբ պայմանավորված գնումները ըստ խմբավորումների	Պայմանագրային գինը, մլրդ դրամ	Մասնաբաժինը մեկ անձից կատարված գնումներում	Կնքված պայմանագրերի քանակը, հատ	Մասնաբաժինը մեկ անձի պայմանագրերի թվում
Առողջապահական ծառայություններ	67.8	69.0%	2787	40.4%
Ավտոտրանսպորտային պահովագրական ծառայություն	0.16	0.2%	177	2.6%
Էլեկտրաէներգիայի բաշխում	5.87	6.0%	256	3.7%
Բնական գազի բաշխում և գազասպասարկում	2.7	2.8%	205	3.0%
Ջրի մատակարարում	0.9	0.9%	212	3.1%
Փոստային ծառայություններ	3.4	3.5%	140	2.0%

<b>Ընդհանուր</b>	81	82.3%	3777	54.8%
------------------	----	-------	------	-------

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 1-ից, մրցակցության բացակայությամբ պայմանավորված գնումները կազմում են մեկ անձից գնումների 82.3 տոկոսը, որի մեծ մասը բաժին է ընկնում առողջապահական ծառայությունների համար կնքված պայմանագրերին, որը նույնպես կարող է գերծ չլինել կոռուպցիոն ռիսկերից: Ստորև ներկայացված աղյուսակում առանձնացվել են ՀՀ ԱՆ-ի հիվանդանոցային ծառայությունների համար կնքած խոշորագույն մատակարարների ցանկը:

**Աղյուսակ 2. ՀՀ ԱՆ-ի հիվանդանոցային ծառայությունների համար կնքված խոշորագույն 10 մատակարարները**

Խոշորագույն մատակարարներ	Կնքված պայմանագրերի ընդհանուր գինը, մլն ՀՀ դրամ	Պայմանագրերի քանակը, հատ
«Սուրբ Գ. Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ	4,971	20
«Էրեբունի ԲԿ» ՓԲԸ	3,528	16
«Արաբկիր» Բժշկական Համալիր ՍՊԸ	2,907	14
«Մ. Հերացու անվ երևանի պետ բժշկ համալսարան» ՊՈԱԿ	2,207	16
«Վերարտ.առողջ., պերինատալոգիայի, մանկաբարձ. և գինեկ.հանրապետ. ինստիտուտ» ՓԲԸ	1,834	15
«Արմենիա» հանրապետական ԲԿ ՓԲԸ	1,789	12
«Նատալի ֆարմ» ՍՊԸ («Աստղիկ» ԲԿ)	1,533	14
«Սուրբ Աստվածամայր ԲԿ» ՓԲԸ	1,405	12
«Շտապբուժօգնություն» ՓԲԸ	1,395	1
«Նորթ Մարաշ ԲԿ» ՓԲԸ	1,290	3

Սակայն, անդրադառնալով մոնիտորինգային մեր հիմնական թիրախին՝ այլընտրանքային առկայության պարագայում ոչ մրցակցային ընթացակարգով իրականացված գնումների պայմանագրերին, որոնք ըստ մեր մեթոդաբանության կազմում են մեկ անձից իրականացված գնումների 17.7 տոկոսը: Ոչ օբյեկտիվ՝ այսինքն ոչ մրցակցային հիմքով կնքված պայմանագրերի թիվը հասնում է 3 119-ի: Ըստ e-gov.am կայքի հավաքագրված տվյալների ոչ օբյեկտիվ հիմքերով մեկ անձից գնումների պայմանագրային ընդհանուր գումարը 2016թ.-ին կազմել է 16,376 մլն ՀՀ դրամ: Ըստ պայմանագրերի քանակի ամենախոշոր ծախսային ուղղությունները ավիասպասարկման և կապի ծառայությունների համար կնքված պայմանագրերն են: Ստորև ներկայացված են խոշորագույն 10 ենթաուղղությունները ըստ կնքված պայմանագրերի քանակի.

**Աղյուսակ 3. Այլընտրանքի առկայության պարագայում այլ ոչ մրցակցային ձեռքբերումներ խոշորագույն ենթաուղղությունները ըստ կնքված պայմանագրերի քանակի**

Ենթաուղղությունները ըստ գնման առարկաների	Պայմանագրերի քանակը, հատ	Մասնաբաժինը ընդհանուր քանակում	Պայմանագրային ընդհանուր գինը, մլն ՀՀ դրամ
Ավիասպասարկում	543	17%	388
Կապի ծառայություններ	323	10%	1,015
Անշարժ գույքի վարձակալություն	283	9%	689

<b>Ավտոմեքենաների նորոգման և պահպանման ծախսեր</b>	255	8%	409
<b>Ծրագրային ապահովման և սպասարկման ծառայություններ</b>	148	5%	729
<b>Շինարարության տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայություններ</b>	139	4%	89
<b>Թերթերի և ամսագրերի ձեռքբերում</b>	120	4%	12
<b>Սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսեր</b>	98	3%	49
<b>Թերթերում հայտարարությունների հրապարակման ծառայություններ</b>	96	3%	19
<b>Տպագրական աշխատանքներ</b>	81	3%	1,199


Դիտարկենք ամենաշատ պայմանագրեր կնքված ուղղությունների կառուցվածքը առավել մանրամասն: Քանակային առումով ամենից հաճախ մեկ անձից գնման ընթացակարգով ձեռք են բերվել ավիատոմսեր: Հարկ է նշել, որ ավիասպասարկման ծառայությունների համար կնքված պայմանագրերի դեպքում գերակշռող դիրք ունեն մի քանի մատակարար ընկերություններ, դրանցից խոշորագույնը «Ավիատուր Գրուպ» ՍՊԸ-ն է, որն առաջատար է և ընդհանուր պայմանագրային գնով, և պայմանագրերի քանակով: «Ավիատուր Գրուպի»-ի մասնաբաժինը կազմում է ավիասպասարկման ուղղված մեկ անձից գնումների 35%-ը:

**Աղյուսակ 4. Մեկ անձից գնումներով խոշորագույն մատակարար ավիաընկերությունները**

<b>խոշորագույն ընկերությունները</b>	<b>Պայմանագրային գինը, մլն ՀՀ դրամ</b>	<b>Պայմանագրերի քանակը, հատ</b>
<b>«Ավիատուր Գրուպ» ՍՊԸ</b>	136	134
<b>«Տրինիդատ» ՍՊԸ</b>	68	103
<b>«ՎինդՌոուզԹրավել-Պրո» ՍՊԸ</b>	36	65
<b>«Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ</b>	29	67
<b>«Ատլանտիս տուր-4+1» ՍՊԸ</b>	26	17
<b>«Սպուտնիկ» ՍՊԸ</b>	21	37
<b>«Լ.Ս.-ՖԱՆՏՈՒՐ» ՍՊԸ</b>	10	15
<b>«Մարոքյաններ» ՍՊԸ</b>	9	12
<b>«ՍՍ ԹՐԵՎԼ» ՍՊԸ</b>	8	11
<b>«ԲԼԵՔՍԹՈՒՆ» ՍՊԸ</b>	8	14
<b>Այլ ընկերություններ</b>	32	68

Ինչ վերաբերում է այս ենթաուղղության խոշորագույն պատվիրատուներին, ապա այստեղ առաջատարներն են ՀՀ ՊՆ-ն, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը և Ոստիկանությունը: Խոշորագույն պատվիրատու ՀՀ ՊՆ-ի կնքած 133 պայմանագրերի ընդհանուր պայմանագրային գինը կազմում է 150 մլն դրամ, որը, ինչպես երևում է Նկար 1-ից, կազմում է ընդհանուրի 39%-ը: Այս գերատեսչությունը պայմանագիր կնքելուց հստակ նախընտրությունը տվել է երեք հիմնական մատակարարներին, որոնք են «Ավիատուր Գրուպ» ՍՊԸ-ն, «Տրինիդատ» ՍՊԸ-ն և «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ն: Առաջին երկուսը նաև Ոստիկանության նախընտրելի մատակարարներից են:

**Գրաֆիկ 1.**



Կապի ծառայության ոլորտում մեկ անձից գնումների հրապարկված պայմանագրերի թիվը կազմում է 323, որոնց պայմանագրային գինը հասնում է 1,105 մլն ՀՀ դրամի: Այս ենթաուղղության խոշոր մասնաբաժինը շարունակում է մնալ «Արմենիա տելեֆոն կոմպանի» ՓԲԸ-ին, որը պայմանավորված է, ինչպես արդեն նշել ենք Նախորդ տեղեկագրերում, շուկայում ֆիքսված հեռախոսակապի գերիշխող դիրքով:

**Աղյուսակ 5. Կապի ծառայության խոշորագույն մատակարարները**

Խոշորագույն օպերատորները	Կատարված գնումների ծավալը, մլն դրամ	Մասնաբաժինը ընդհանուր ծավալում	Պայմանագրերի քանակը, հատ	Մասնաբաժինը ընդհանուր քանակում
«Արմենիա տելեֆոն կոմպանի» ՓԲԸ	665	65.5%	211	65.3%
«Օրանժ Արմենիա» ՓԲԸ	13	1.4%	11	3.4%
«Ղ-տելեկոմ» ՓԲԸ	51	5.1%	27	8.4%
«Յուլբոմ» ՍՊԸ	221	21.8%	61	18.9%

**Այլընտրանքի առկայության պարագայում այլ ոչ միցակցային ձեռքբերումներ**

Մեկ անձից կատարված գնումներում ամենատարածվածը մինչև բազային միավորը՝ 1,000,000 ՀՀ դրամը, պայմանագրային գնով կնքված պայմանագրեր են, որոնց թիվը հասնում է 2472-ի, և որպես գնման իրականացման հիմք նշվում է ՀՀ Կառավարության 10.02.201 յթ.-ի թիվ 168-Ն որոշման 25-րդ կետի 2-րդ ենթակետը: Այստեղ հարկ է նշել, որ երբեմն նույն ընկերության հետ նույն ժամանակահատվածում կնքում են մեկից ավելի պայմանագրեր բազային միավորը չգերազանցելու համար: Օրինակ՝ Կառավարության աշխատակազմը 2016թ. դեկտեմբեր ամսվա մեջ 840, 648 և 825 հազարական դրամ պայմանագրային գներով երեք պայմանագրեր է կնքել «Ակտիս» ՍՊԸ-ի հետ գրառումների տեսրեր գնելու համար: Մեկ այլ օրինակ կարող է լինել ՀՀ ԱԺ-ի և Կարեն Զոսյան ԱԶ-ի միջև կնքված նույն ամսում բազային միավորից ցածր մեկից ավելի կնքված պայմանագրերը:

Ընդհանուր առմամբ մեր կողմից առանձնացված ոչ օբյեկտիվ հիմքով կնքված 1,000,000 ՀՀ դրամ բազային միավորը գերազանցած պայմանագրերի թիվը մեկ անձից գնումներում 648 է, իսկ 20 մլն դրամի սահմանաչափը գերազանցած հրապարակված պայմանագրերի թիվը հասնում է 94-ի, ինչը 2015թ. հրապարակված 204 պայմանագրերի համեմատ զգալիորեն պակաս է:

Հավելվածներում կարող եք գտնել վերոնշյալ պայմանագրերի մասին հավելյալ տեղեկություններ:

e-gov.am կայքից մեկ անձից պայմանագրերի հավաքագրված պայմանագրերը ըստ գնման առարկաների խմբավորվել են ենթաուղղություններում, որոնցից խոշորագույնները ըստ ընդհանուր պայմանագրային գնի ներկայացված են ստորև.

**Աղյուսակ 6. Խոշորագույն ենթաուղղությունները ըստ պայմանագրային գնի**

Այլընտրանքի առկայության պարագայում այլ ոչ մրցակցային ձեռքբերումները ըստ ենթաուղղությունների	Պայմանագրերի գինը, մլն ՀՀ դրամ	Պայմանագրերի քանակը	Մասնաբաժինը ոչ օբյեկտիվ գնումներում	Խոշորագույն մատակարար ընկերությունը	Մասնաբաժինը ենթաուղղության մեջ
Հիգիենայի հետ կապված ծառայություններ	2,961	3	18%	«Հիվանդ.վերահսկ. և կանխարգ. ազգ. կենտրոն» ՓԲԸ	97.2%
Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	2,735	68	17%	«Սահակյանշին» ՍՊԸ	37%
Դեղորայք	2,490	9	15%	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ	46.4%
Տպագրական աշխատանքներ	1,199	81	7%	«Մանմար» ՓԲԸ	31.7%
Ծրագրային ապահովման և սպասարկման ծառայություններ	729	148	4%	«Նորք» ՏՎԿ ՓԲԸ	40%
Չինտեխնիկայի ձեռքբերում	725	2	4%	«Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ	93%
Անշարժ գույքի վարձակալություն	689	283	4%	«Հանարդնախա գիծ» ԲԲԸ	24.5%
Գյուղատնտեսության մեջ կիրառվող պատվաստանյութեր	432	4	3%	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖԴԲԿ	59%
Ռենտգեն սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	430	2	3%	«Արեմպա Ինթերնեշնլ» ՍՊԸ ՖԶԵ	100%
Ավտոմեքենաների նորոգման և պահպանման ծախսեր	409	255	2%	«Տոյոտա Երևան» ՍՊԸ	73.7%

Շենքերի և շինությունների շինարարության համար կնքված պայմանագրերում գերատեսչությունները ընդգծված նախապատվություններ ունեն. Ֆինանսների նախարարությունը Դիլիջանի ֆինանսական դպրոցի շինարարության համար մեկ անձից գնման սկզբունքով 1,024 մլն դրամ ընդհանուր արժողությամբ պայմանագրեր էր կնքել «Սահակյանշին» ՍՊԸ-ի հետ, Զաղաքաշինության նախարարությունը ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ

իրավիճակների նախարարության նոր համալիրի շինարարական աշխատանքների համար մեկ անձով պայմանագրեր է կնքել «Երևանշին» ՍՊԸ-ի հետ ընդհանուր **877 մլն** արժողությամբ, իսկ Արդարադատության նախարարությունը «Գոհարիկ» ՍՊԸ-ի հետ 198 մլն արժողությամբ պայմանագիր է կնքել:

ՀՀ առողջապահության նախարարությունը շարունակում է առանց մրցակցային հիմունքների ինսուլին գնել «Մ.Լ.Ն ֆարմ» ՍՊԸ-ից և ՆովոՆորդիսկ Ա/Ս դանիական ընկերությունից, իսկ գլխկլազիդ՝ Լե Լաբորատուար Սերվիե ՍԱՍ ֆրանսիական ընկերությունից: Այստեղ խոշորագույն գնումը իմունաբանական դեղերի՝ պատվաստանյութերի ձեռքբերումն է 1,155 մլն ՀՀ դրամով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամից:


Գերատեսչությունների տպագրական աշխատանքների կարիքների համար մեկ անձից կնքված խոշորագույն մատակարարներ հանդիսանում են «Մանմար» ՍՊԸ-ն 380մլն դրամ ընդհանուր պայմանագրային գնով, «Չանգակ» և «Տիգրան Մեծ» ՍՊԸ-ները, որոնց պայմանագրային գինը կազմում է ընդհանուր տպագրական աշխատանքների համար կնքված մեկ անձից գնման պայմանագրերի **71.2%-ը**:

Ծրագրային ապահովման խոշորագույն պայմանագիրը բաժին է հասնում սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգի սպասարկման, շահագործման և տեղեկատվության տրամադրման ծառայությունների համար «Նորք» ՏԿԿ ՓԲԸ-ի և ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարության միջև կնքված պայմանագրին, որի գինը կազմում է 292մլն դրամ: Այս ոլորտում մեկ անձից գնումներով խոշորագույն մատակարարներն են շարունակում մնալ «Էկենգ» և «Այյունեթվորբս» ընկերությունները: Մյուս խոշորագույն ենթաուղղության՝ անշարժ գույքի վարձակալության համար կնքված պայմանագրերի դեպքում, որոնք ևս մեր կողմից համարվել են ոչ օբյեկտիվ, «Հայնախարոջին» ՍՊԸ-ն ունի գերիշխող դիրք ի շնորհիվ ՊԵԿ-ի և ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության հետ կնքված պայմանագրերի: Մյուս խոշորագույն պայմանագրային կողմն այս ենթաուղղությունում Շողերիևա Ստեփանի Մկրտչյան ֆիզիկական անձն է՝ ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյանի կինը, որը 2012թ.-ից անշարժ գույքի վարձակալության պայմանագիր ունի կնքած ՀՀ ՖՆ-ի հետ: Երրորդ խոշոր վարձատու մատակարարը «Էրեբունի պլազա» ՍՊԸ-ն է, որի հետ կնքած պայմանագրերի ընդհանուր գինը կազմում է նշված ենթաուղղության 10%-ը:


**Գրաֆիկ 2. Խոշորագույն պատվիրատուները ըստ պայմանագրային գնի և քանակի**



**Ըստ պայմանագրային գնի, մլն դրամ**




**Ըստ պայմանագրերի քանակի, հատ**



Խոշորագույն պատվիրատուն մեկ անձից գնումներով ՀՀ ԱՆ-ն է՝ հիմնականում դեղորայքի և հիգիենայի հետ կապված ծառայությունների համար կնքված պայմանագրերով: Կարևորելով հատկապես պաշտպանության նախարարության դերը՝ հարկ ենք համարել առանձնացնել այս գերատեսչության մեկ անձից կատարված գնումները և նախընտրած մատակարարներին:

**Գրաֆիկ 3.**



Ինչպես 2015թ.-ին, այնպես էլ այս տարի ևս մեկ անձից գնման հիմքով S-72 տանկի և ՀՄՍ-2 համալիր վարժասարքեր են գնվել «Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ-ից, իսկ կոմուտացիոն սարքեր 50մլն դրամ պայմանագրային գնով գնվել «Սատուռն-Ավիա» ՍՊԸ-ից:


Յետաքրքիր է, որ e-gov.am կայքում հրապարակված 2016թ. կնքված պայմանագրերի թիվը 2015թ.- համեմատ կրճատվել է 73-ով հասնելով 164-ի: 2016թ. հրապարակված պայմանագրերում չկան նաև 2015թ. ՀՀ ՊՆ-ի մեկ անձից գնումներում հաճախակի հանդիպող հացաթխման աշխատանքների համար կնքված պայմանագրերը: Չգալիորեն կրճատվել են նաև ներկայացուցչական ծառայությունների համար նախատեսված մեկ անձից գնումների պայմանագրերի թիվը: 2015թ. «Չինառ» ՍՊԸ-ի հետ կնքվել էր ընդհանուր 14 մլն արժողությամբ 17 պայմանագիր: 2016թ. մեկ անձից գնումների պայմանագրերում ներկայացուցչական ծախսերից միակ մեկ պայմանագիր է հրապարակված՝ «Գեվտրիգ» ՍՊԸ-ի հետ:

Մեդալների պատրաստման գործում 2016թ.-ին ևս միակ մատակարարն է մնում «Մակսիմ» ՍՊԸ- ն, որի հետ կնքվել է 17 մլն դրամի պայմանագիր, իսկ մեդալների տուփերի պատրաստման մեկ անձից գնման ընթացակարգով պայմանագիր է կնքվել երկու ընկերության հետ՝ «Ատա» և «Վանե» ՍՊԸ- ների հետ:

#### 4. Բողոքարկման համակարգի մոնիտորինգ


Բողոքարկման համակարգի մոնիտորինգի համար տվյալներ համակաթագրվել են ՀՀ ֆինանսների նախարարության [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքի «Բողոքարկում» ենթաբաժնում բողոքարկման հայտարարությունների և կայացած որոշումների մասին հրապարակված տեղեկատվությունից:

**Գրաֆիկ 4.**



Ըստ gnumner.am կայքի հրապարակված բողոքների մասին հայտարարությունների՝ 2016թ. ստացվել է 133 բողոք, որոնց գրեթե կեսը մերժվել է, ստացված 133 բողոքից բավարարվել է 42-ը, իսկ 7 բողոքի հետ կապված ոչ մի որոշում հրապարակված չի կայքում: Վերոնշյալ 7 բողոքների հավելյալ տեղեկություններ կարող եք գտնել Հավելված 2-ում: Վերոնշյալ 133 բողոքների 22%-ը ուղղված է եղել ՀՀ ՊՆ-ի հայտարարված գնում կատարելու ընթացակարգերին, իսկ բողոքարկվող ընթացակարգերում 29 բողոքներից 22-ը բաժին են հասնում շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերի դեմ բողոքներին:

**Գրաֆիկ 5.**




Ուշագրավ է, որ նաև այն հանգամանքը, որ ընդհանուր բողոքների թիվը անցած տարիների համեմատ կտրուկ աճել է: Ինչպես տեսնում ենք գրաֆիկ 5-ից 2016թ. բողոքների թիվը կտրուկ աճել է նախորդ տարիների համեմատ: 2015թ. տվյալների հետ համեմատած բողոքների թիվը աճել է 59 տոկոսով:

**Աղյուսակ 7. Պատվիրատուների դեմ ներկայացված բողոքների կառուցվածքը**

Պատվիրատու	Բողոքների քանակը	Կշիռը ընդհանուր ստացված բողոքների ընդհանուր թվի մեջ
ՀՀ պաշտպանության նախարարություն	29	22%
Երևանի քաղաքապետարան	15	11%
«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ	8	6%
Վայքի քաղաքապետարան	5	4%
«Երևանի Մխիթար Հերացու անվան Պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	4	3%
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	4	3%
«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ	3	2%
«Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ	3	2%
ՀՀ ԶՆ «Զաղաքաշինական ԾԻԳ» ՊՀ	3	2%
Այլ	59	44.36%


Ուսումնասիրելով ամենահաճախ բողոք ստացած մարմինների դեմ բողոքները՝ նկատում ենք, որ ՀՀ ՊՆ-ին ուղղված բողոքների 34.5%-ը, ինչպես տեսնում ենք գրաֆիկ 6-ից, մերժվել է, իսկ Երևանի քաղաքապետարանի դեպքում մերժվել են կեսից ավելի բողոքները:

**Գրաֆիկ 6.**



Ամենաշատ բողոք ներկայացրած ընկերության՝ «Խաչպար» ՍՊԸ-ի բողոքների մեծ մասն ուղղված է եղել «Նորթ Մարաշ» ԲԿ-ին և «Նորթ» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ, իսկ «Բարվա» ՍՊԸ-ն մեծամասամբ բողոքել է Շիրակի մարզի գյուղերի հակակարկտային կայանների համար առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի դեմ:

**Գրաֆիկ 7.**



## Հավելվածներ

### Հավելված 1. 20մլն-ից բարձր պայմանագրային գին ունեցող մեկ անձից գնման պայմանագրեր

Պատվիրատու	Գնման առարկա	Գնման հիմքը	Ընտրված մասնակից	Պայմանագրային գինը, մլն ՀՀ դրամ
ՀՀ առողջապահության նախարարություն	Հիգիենայի հետ կապված ծառայություններ	ՀՀ կառավարության 24.12.15թ. թիվ 1555-Ն որոշում և ՀՀ կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի 20-րդ տող	«Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՓԲԸ	2,878
ՀՀ առողջապահության նախարարություն	Դեղորայք	ՀՀ կառավարության 24.12.15թ. թիվ 1555-Ն և 1546-Ա որոշումներ	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ	1,155
ՀՀ ֆինանսների նախարարություն	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառավարության 24.12.2015թ. թիվ-1555-Ն որոշում, ՀՀ կառ. 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերություն	«Սահակյանշին» ՓԲԸ	690
ՀՀ պաշտպանության նախարարություն	Չինտեխնիկայի ձեռքբերում	ՀՀ կառավարության. 10.02.2011թ. N168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի 5-րդ տող	«Ռադվան տեխնոլոգիա» ՍՊԸ	675
ՀՀ առողջապահության նախարարություն	Դեղորայք	ՀՀ կառավարության 24.12.15թ. թիվ 1555-Ն որոշում և ՀՀ կառավարության 10.10.13թ. թիվ 1108-Ն որոշում	Նովոնորդիսկ Ա/Ս (Դանիա)	661
ՀՀ առողջապահության նախարարություն	Դեղորայք	ՀՀ կառավարության 24.12.15թ. թիվ 1555-Ն որոշում և ՀՀ կառավարության 30.01.15թ. թիվ 78-Ն որոշում	Լես Լաբորատուար Սերվիե ՍԱՍ (Ֆրանսիա)	415
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառավարության հունվարի 14-ի թիվ 39-Ն որոշում	«Երևանշին» ՍՊԸ	387
ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	Տպագրական աշխատանքներ	ՀՀ կառավարության 10/02/11թ թիվ 168-Ն որոշ. 25-րդ կետ 5-րդ ենթակետ 5-րդ տող, ՀՀ կառավարության 21/04/16թ թիվ 496-Ն որոշ	«Մանմար» ՓԲԸ	300
ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարություն	Ծրագրային ապահովման և սպասարկման ծառայություններ	ՀՀ կառավարության 168Ն որոշման 25-րդ կետի 5-ի 5-րդ ենթակետ	«ՆՈՐԶ» ՏՎԿ ՓԲԸ	292

ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	14.01.2016թ. ՀՀ կառավարության N39-Ն որոշում	«Երևանշին» ՍՊԸ	283
ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	Տպագրական աշխատանքներ	ՀՀ կառավարության 10/02/11 թ թիվ 168-Ն որոշ. 25-րդ կետ 5-րդ ենթակետ 5-րդ տող, ՀՀ կառավարության 21/04/16թ թիվ 496-Ն որոշ	«ՉԱՆԳԱԿ-97» ՍՊԸ	281
ՀՀ առողջապահության նախարարություն	Դեղորայք	ՀՀ կառավարության 25.12.15թ. թիվ 1555-Ն և ՀՀ կառավարության 16.07.15թ. թիվ 792-Ն	«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ	255
ՀՀ ֆինանսների նախարարություն	Ռենտգեն սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ-168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ մասի 27-րդ ենթակետ	«Արեմպա Ինթերնեյշլ» ՍՊԸ ՖԶԵ	234
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառավարության հունվարի 14-ի թիվ 39-Ն որոշում 22.09.2016թ. ՀՀ կառավարության N1007-Ն որոշում	«Երևանշին» ՍՊԸ	206
ՀՀ արդարադատության նախարարություն	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառավարության 26.11.2015թ 1400-Ն որոշում	«ԳՈՐԱՐԻԿ»	198
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	Ռենտգեն սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ մասի 27-րդ ենթակետ, ՀՀ կառավարության 24.12.2015թ. թիվ 1555-Ն որոշում	«Արեմպա Ինթերնեյշլ» ՍՊԸ ՖԶԵ	196
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	Գյուղատնտեսության մեջ կիրառվող պատվաստանյութեր	ՀՀ կառ. 10/02/11 թ թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետ 6-րդ ենթ թ. պարբ. և ՀՀ կառ. 2016 թ. հունվարի 14-ի թիվ 12-Ն որոշում	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖԴԲԿ	184
ՀՀ առողջապահության նախարարություն	Բժշկական վերլուծության ծառայություններ	ՀՀ կառավարության 24.12.15թ. թիվ 1555-Ն որոշում և ՀՀ կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի 5-րդ տող	«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվ. առողջապահական ազգային ինստիտուտ» ՓԲԸ	183
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	Գյուղատնտեսության մեջ կիրառվող պատվաստանյութեր	ՀՀ կառ. 10/02/11 թ թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետ 6-րդ ենթ թ. պարբ. և ՀՀ կառ. 2016 թ. հունվարի 14-ի թիվ 12-Ն որոշում	Շչոկովսկի բիոկոմբինատ ԴԴՈՒԶ	177

ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	Ավտոմեքենաների նորոգման և պահպանման ծախսեր	ՀՀ կառ.30/01/15թ թիվ 105-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի 27-րդ կետ	«Տոյոտա Երևան» ՍՊԸ	163
ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	Տպագրական աշխատանքներ	ՀՀ կառավարության 10/02/11 թ թիվ 168-Ն որոշ. 25-րդ կետ 5-րդ ենթակետ 5-րդ տող, ՀՀ կառավարության 21/04/16թ թիվ 496-Ն որոշ	«Տիգրան Մեծ հրատարակչություն» ՓԲԸ	126
ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	Կապի ծառայություններ	ՀՀ կառ.30/01/15թ թիվ 105-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի 3-րդ կետ	«Արմենիա տելեֆոն կոմպանի» ՓԲԸ	126
ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Անշարժ գույքի վարձակալություն	ՀՀ կառավարության 04.06.14թ. թիվ 596-Ն , 08.10.15թ. թիվ 1149-Ն և 24.12.15թ. թիվ 1555-Ն որոշումները և 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի	«Հանարդևախագիծ» ԲԲԸ	116
ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարություն	Հիվանդանոցային ծառայություններ	ՀՀ կառ. 168-Ն որոշման 32-րդ կետի 4-րդ ենթակետի 18-րդ մաս	«Արթմեդ» վերականգնողական կենտրոն ՓԲԸ	111
ՀՀ ֆինանսների նախարարություն	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառ. 24.12.2015թ. թիվ 1555-Ն որոշում, ՀՀ կառ. 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 25-րդ կետի 6-րդ ենթակետի«բ» պարբերություն	«Սահակյանշին» ՓԲԸ	110
ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	Տպագրական աշխատանքներ	ՀՀ կառավարության 10/02/11 թ թիվ 168-Ն որոշ. 25-րդ կետ 5-րդ ենթակետ 5-րդ տող, ՀՀ կառավարության 21/04/16թ թիվ 496-Ն որոշ	Հայաստանի Շախմատի ակադեմիա հիմնադրամ	107
ՀՀ արդարադատության նախարարություն	Հանրային սննդի ձեռքբերում	Գնումների մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետ, ՀՀ կառավարության 30/01/15թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյ	«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ	101
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	25.09.15թ. ՀՀ կառավարության թիվ 1082-Ն որոշում, 24.12.16թ. ՀՀ կառ. թիվ 1555-Ն որոշում,ծավալաթ. համադրում	«Հորիզոն-95» ՍՊԸ	98
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառ. 24.12.2015թ. թիվ 1555-Ն որոշում ՀՀ կառ. 18.12.2014թ. թիվ 1515-Ն որոշում, 17.09.2015թ. ՀՀ կառավարության թիվ 1074-Ն որոշում-փոփոխ.,ՀՀկառ.21.07.16թ N757-Ն որ.	«Լիլանարմ» ՍՊԸ	87
ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	Տպագրական աշխատանքներ	ՀՀ կառավարության 10/02/11 թ թիվ 168-Ն որոշ. 25-րդ կետ 5-րդ ենթակետ 5-րդ տող,	«Մանմար» ՓԲԸ	79

ՀՀ արդարադատության նախարարություն	Հանրային սննդի ձեռքբերում	Գնումների մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետ, ՀՀ կառավարության 30/01/15թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյ	«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ	76
ՀՀ առողջապահության նախարարություն	Հիգիենայի հետ կապված ծառայություններ	ՀՀ կառավարության 24.12.15թ. թիվ 1555-Ն որոշում և ՀՀ կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի 20-րդ տող	«Ախտահանման կենտրոն» ՓԲԸ	75
ՀՀ ֆինանսների նախարարություն	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառավարության 24.12.2015թ. թիվ-1555-Ն որոշում, ՀՀ կառ. 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերություն	«Սահակյանչին» ՓԲԸ	72
ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	Գյուղատնտեսության մեջ կիրառվող պատվաստանյութեր	ՀՀ կառ. 10/02/11 թ թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետ 6-րդ ենթ. բ. պարբ. և ՀՀ կառ. 2016 թ. մարտի 3-ի թիվ 246-Ն որոշում	«Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ	70
ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարություն	Հիվանդանոցային ծառայություններ	ՀՀ կառ. 168-Ն որոշման 32-րդ կետի 4-րդ ենթակետի 18-րդ մաս	«Արթմեդ» վերականգնողական կենտրոն ՓԲԸ	70
ՀՀ քննչական կոմիտե	Կապի ծառայություններ	ՀՀ կառավ 10.02.2011թ. 168-Ն որոշահաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթ. աղ.3 տող	«Արմենիա տելեֆոն կոմպանի» ՓԲԸ	69
ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե	Գիտահետազոտական ծառայություններ	ՀՀ կառ. 24.12.15թ. թիվ 1555-Ն որոշման, ՀՀ կառ. 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստ. կարգի 25-րդ կետի 5-րդ ենթ. 5-րդ կետ և ՀՀ կառ. 12.07.01թ.թիվ 640 որոշմամբ հաստ. կարգի 5	«Միջուկային և ռադիացիոն անվտանգ գիտատեխնիկ կենտրոն» ՓԲԸ	67
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	Անշարժ գույքի վարձակալություն	ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի 17-րդ տող	Շողերիսա Մկրտչյան	65
ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	Ծրագրային ապահովման և սպասարկման ծառայություններ	ՀՀ կառ.30/01/15թ թիվ 105-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի 27-րդ կետ	«ԷԿԵՆԳ» ՓԲԸ	65
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	Ծրագրային ապահովման և սպասարկման ծառայություններ	ՀՀ կառավարության 10.02.2011թ.Ն 168-Ն որոշման 25-րդ կետի,5-րդ ենթակետի27-րդ տող	«Այլուներթվորթս» Սպը	63
ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	Տպագրական աշխատանքներ	ՀՀ կառավարության 10/02/11թ թիվ 168-Ն որոշ. 25-րդ կետ 5-րդ ենթակետ 5-րդ տող, ՀՀ կառավարության 21/04/16թ թիվ 496-Ն որոշ	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ	62



ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	Պարբերական հրապարակումներ	ՀՀ կառավարության 10/02/11թ թիվ 168-Ն որոշ. 25-րդ կետ 5-րդ ենթակետի 8-րդ տող	«Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ	62
ՀՀ արդարադատության նախարարություն	Հանրային սննդի ձեռքբերում	Գնումների մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետ, ՀՀ կառավարության 30/01/15թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյ	«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամ	54
ՀՀ ֆինանսների նախարարություն	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառավարության 24.12.2015թ. թիվ-1555-Ն որոշում, ՀՀ կառ. 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերություն	«Սահակյանշին» ՓԲԸ	54
ՀՀ ֆինանսների նախարարություն	Ծրագրային ապահովման և սպասարկման ծառայություններ	Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 25-րդ կետի 5-րդ մասի 27-րդ ենթակետ	«ԼՍՈՖՏ» ՍՊԸ	53
ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարություն	Հանրությանը իրազեկման ծառայություններ	ՀՀ կառ. 168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետ 5-րդ կետ և ՀՀ կառ. 28.07.2011թ. 1059-Ն որոշման 12, 13-րդ կետեր	«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ	53
ՀՀ սփյուռքի նախարարություն	Տպագրական աշխատանքներ	ՀԱՄԱԶԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 1-Ի 25-ՐԴ ԿԵՏԻ 5-ՐԴ ԵՆԹԱԿԵՏ	«ԶԱՆԳԱԿ-97» ՍՊԸ	51
ՀՀ պաշտպանության նախարարություն	Չինտեխնիկայի ձեռքբերում	ՀՀ կառ. 10.02.11թ. N 168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի 5-րդ տող	«Սատուրն-Ակիա» ՓԲԸ	50
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ներկայացուցչական ծախսեր	ՀՀ կառ. 25.08.16 թիվ 883-Ա որոշում և թիվ 168-Ն որոշման 25. 6. գ. պարբերություն Հիմք առ 27.10.16թ ԴՎԱ/3365ա գրություն	«ԳԵՎՏԻԳ» ՍՊԸ	50
ՀՀ պաշտպանության նախարարություն	Ինքնաթիռների պահպանման ծառայություն	ՀՀ կառավարության 30.01.2015թ թիվ 105 Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի 24-րդ տող	«ՈՒԱԴԱՐ- ԱՎԻԱ» ՓԲԸ	49
ՀՀ ֆինանսների նախարարություն	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառ. 24.12.2015թ. թիվ 1555-Ն որոշում, ՀՀ կառ. 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերություն	«Սահակյանշին» ՓԲԸ	49
ՀՀ ֆինանսների նախարարություն	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառ. 24.12.2015թ. թիվ 1555-Ն որոշում, ՀՀ կառ. 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 25-րդ կետի 6-րդ ենթակետի «բ» պարբերություն	«Սահակյանշին» ՓԲԸ	47

ՀՀ պաշտպանության նախարարություն	Պատահարներից ապահովագրման ծառայություն	ՀՀ կառավարության. 10.02.2011թ. N168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի 30-դ տող, Հիմք ԴՎԱ/6 13 16.03.2016թ	«Նաիրի ինչուրանս» ԱՄՂԸ	45
ՀՀ պաշտպանության նախարարություն	Պատահարներից ապահովագրման ծառայություն	ՀՀ կառավարության. 10.02.2011թ. N168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի 30-դ տող, Հիմք ԴՎԱ/6 13 16.03.2016թ	«Ռոսգոստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	45
ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	Տպագրական աշխատանքներ	ՀՀ կառավարության 10/02/11 թիվ 168-Ն որոշ. 25-րդ կետ 5-րդ ենթակետ 5-րդ տող, ՀՀ կառավարության 21/04/16թ թիվ 496-Ն որոշ	«Արևիկ հրատարակչություն» ՓԲԸ	44
ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	Ծրագրային ապահովման և սպասարկման ծառայություններ	ՀՀ կառ.30/01/15թ թիվ 105-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի 27-րդ կետ	«ՖՎԵԳ» ՍՊԸ	44
Արարատի մարզպետարան	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառավարության 2016թ. հունվարի 20-ի թիվ 37-Ն որոշում	«Արտ Պլաս» ՍՊԸ	43
ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարություն	Բանկային ծառայություններ	ՀՀ կառ. 168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի 25-րդ կետ, փոփոխ.՝ ՀՀ կառ. 168-Ն 36-րդ կետ, 9-րդ ենթ., համաձայն ՀՀ կառ. 21.07.16թ. N 757-Ն որոշման	ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ	43
ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	Ավտոմեքենաների նորոգման և պահպանման ծախսեր	ՀՀ կառ.30/01/15թ թիվ 105-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի 27-րդ կետ	«Տոյոտա Երևան» ՍՊԸ	40
ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով	Համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր	ՀՀ կառավարության 30.01.2015թ թիվ 105-Ն որոշմամբ սահմանված կարգի 25-րդ կետ, 6 ենթակետ, մաս բ, ՀՀ կառավարության 15.12.2016թ 1279-Ն որոշում	«Սոֆթթայն ինթերնեյշլ» ՍՊԸ	39
Արարատի մարզպետարան	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառավարության 2016թ. օգոստոսի 11-ի թիվ 823-Ն որոշում	«Արտ Պլաս» ՍՊԸ	39
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	Կապի ծառայություններ	ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի 3-րդ տող	«Յուլբոն» ՍՊԸ	38
ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	Ավտոմեքենաների նորոգման և պահպանման ծախսեր	ՀՀ կառ.30/01/15թ թիվ 105-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի 27-րդ կետ	«Տոյոտա Երևան» ՍՊԸ	36
ՀՀ առողջապահության նախարարություն	Վիճակագրական ծառայություններ	ՀՀ կառավարության 24.12.15թ. թիվ 1555-Ն որոշում և ՀՀ կառավարության 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի 5-րդ	«Ակադեմիկոս Ս. Ավրայբեկյանի անվ. առողջապահական	36

		տող	ազգային ինտիտուտ» ՓԲԸ	
ՀՀ պաշտպանության Նախարարություն	Ախտահանման և դեռատիվացիոն ծառ-ներ	ՀՀ կառ 10.02.11թ 168-Ն որոշ 25 կետ5 ենթ 20 կետ	«Ախտահանման կենտրոն» ՓԲԸ	35
Արարատի մարզպետարան	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառավարության 2016թ. օգոստոսի 11-ի թիվ 823-Ն որոշում	«Մոնոլիտ կապիտալ շին» ՍՊԸ	35
ՀՀ դատախազություն	Կապի ծառայություններ	ՀՀ կառավարության 10/02/11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի 3 կետ	«Արմենիա տելեֆոն կոմպանի» ՓԲԸ	32
ՀՀ քաղաքաշինության Նախարարություն	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	24.12.2015թ. թիվ 1555-Ն որոշում18.06.2015թ. N673-Ն ՀՀ կառավարության որոշում25.09.2015թ. N1082-Ն ՀՀ կառավարության որոշում/զեման ձևի փոփ.	«ՎԱԱՄ» ՍՊԸ	32
ՀՀ կառավարությանն ամրնթեր պետական գույքի կառավարման վարչություն	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառ. 31.03.2016թ. 341-Ն որոշումև 10.02.2011թ. թիվ 168-Ն կարգի 25-րդ կետի 6-րդ ենթակետիբ. պարբերություն	«ԱԳԱԹ-777» ՍՊԸ	31
ՀՀ Նախագահի աշխատակազմ	Անշարժ գույքի վարձակալություն	168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի 17-րդ տող	«ԷՐԵԲՈՒՆԻ-ՊԼԱՉԱ» ՍՊԸ	31
ՀՀ ֆինանսների Նախարարություն	Կապի ծառայություններ	ՀՀ Կառ. 168-Ն որոշման 25.րդ կետի 5-րդ ենթակետ 3-րդ տող	«Յուբոմ» ՍՊԸ	31
ՀՀ կառավարությանն ամրնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	Անշարժ գույքի վարձակալություն	168 Ն որոշման 25-ի 5-ի 17	«Արմենմոտոր» ՓԲԸ	30
ՀՀ կրթության եւ գիտության Նախարարություն	Տպագրական աշխատանքներ	ՀՀ կառավարության 10/02/11թ թիվ 168-Ն որոշ. 25-րդ կետ 5-րդ ենթակետ 5-րդ տող	«ՐԱԲՈՒՆԻ» ՍՊԸ	29
ՀՀ կառավարությանն ամրնթեր ոստիկանություն	Կապի ծառայություններ	ՀՀ կառ.30/01/15թ թիվ 105-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի 3-րդ կետ	«Յուբոմ» ՍՊԸ	27

ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանություն	Սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսեր	ՀՀ կառ.30/01/15թ թիվ 105-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի աղյուսակի 27-րդ կետ	«Ալիկանտե» ՍՊԸ	27
Արարատի մարզպետարան	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառավարության 2016թ. օգոստոսի 11-ի թիվ 823-Ն որոշում	«ԳՈՌՊԼԱՍՍ»	27
Արարատի մարզպետարան	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառավարության 2016թ. օգոստոսի 11-ի թիվ 823-Ն որոշում	«ԳՈՑ» ՍՊԸ	26
ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարություն	Ծրագրային ապահովման և սպասարկման ծառայություններ	ՀՀ կառ. 899-Ն որոշում	«Նորթ» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ	26
ՀՀ Ազգային ժողով	Կապի ծառայություններ	ՀՀ կառ. 168-Ն որոշման 25 կետի 5-րդ ենթակետի 3-րդ տող	«Ղ-տելեկոմ» ՓԲԸ	25
ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	Պարբերական հրապարակումներ	ՀՀ կառավարության 10/02/11թ թիվ 168-Ն որոշ. 25-րդ կետ 5-րդ ենթակետ 8-րդ տող	«ԱՆԴԻՆ Ա» ՍՊԸ	25
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե	Անշարժ գույքի վարձակալություն	ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի 17-րդ տող	Լարիսա Միքայելի Սարգսյան	25
Գեղարքունիքի մարզպետարան	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառավարության 11.08.2016թ. 823-Ն և 27.10.2016թ. որոշումներ	Մարտունու «Նորոգչին» ԲԲԸ	24
Արարատի մարզպետարան	Շենքերի և շինությունների շինարարություն, հիմնանորոգում և ընթացիկ պահպանման աշխատանքներ	ՀՀ կառավարության 2016թ. մարտի 17-ի թիվ 275-Ն որոշում	«ՋԻ ԱՐ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ	24
ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարություն	Նպաստների վճարման ծառայություններ	ՀՀ կառ. 168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի 26-րդ կետ	«Հայփոստ» ՓԲԸ	23

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն	Անշարժ գույքի վարձակալություն	ՀՀ կառավարության 30.07.15թ. թիվ 849-Ն , 24.12.15թ. թիվ 1512-Ն և 24.12.15թ. թիվ 1555-Ն որոշումները և 10.02.11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետի	«Հանարդնախագիծ» ԲԲԸ	23
ՀՀ տարածքային կառավարման եվ զարգացման նախարարություն	Կապի ծառայություններ	ՀՀ կառավար. 24.12.15թ. 1555 որոշում, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի 3-րդ տողի համաձայն	ԶԻԵՆՍԻ-ԱԼՖԱ	23
ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	Տպագրական աշխատանքներ	ՀՀ կառավարության 10/02/11թ թիվ 168-Ն որոշ. 25-րդ կետ 5-րդ ենթակետ 5-րդ տող, ՀՀ կառավարության 21/04/16թ թիվ 496-Ն որոշ	«Սպիկա» ՍՊԸ	23
ՀՀ տարածքային կառավարման եվ զարգացման նախարարություն	Կապի ծառայություններ	ՀՀ կառավար. 24.12.15թ. 1555 որոշում, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի 3-րդ տողի համաձայն	«Արմենիա տելեֆոն կոմպանի» ՓԲԸ	22
ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարություն	Կենսաթոշակների վճարման ծառայություններ	ՀՀ կառ. 168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի 25-րդ կետ	«Հայեկոնսոմբանկ» ԲԲԸ	22
ՀՀ վերահսկիչ պալատ	Անշարժ գույքի վարձակալություն	168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի 17 տող	«ՎԱՐԴԱՆԱՆՑ ԲԻՉՆԵՍ ԿԵՆՏՐՈՆ»	22
ՀՀ կրթության եւ գիտության նախարարություն	Տպագրական աշխատանքներ	ՀՀ կառավարության 10/02/11թ թիվ 168-Ն որոշ. 25-րդ կետ 5-րդ ենթակետ 5-րդ տող, ՀՀ կառավարության 21/04/16թ թիվ 496-Ն որոշ	«ԱՍՏԴԻԿ ԳՐԱՏՈՒՄ» ՍՊԸ	22
ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարություն	Անշարժ գույքի վարձակալություն	ՀՀ կառ. 168-Ն որոշման 25-րդ կետի 5-րդ ենթակետի 17-րդ կետ	Լիլիթ Մրրիկյան	21
ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարություն	Ծրագրային ապահովման և սպասարկման ծառայություններ	«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ 142-Ն) 8-րդ հոդվածի 1-ին կետ	«Կրտսեր կլեքսայան և որդիներ» ԱՊԸ	21
ՀՀ աշխատանքի եվ սոցիալական հարցերի նախարարություն	Ծրագրային ապահովման և սպասարկման ծառայություններ	«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի (ՀՕ 142-Ն) 8-րդ հոդվածի 1-ին կետ	«Սիստեմ վեյ» ՍՊԸ	21

**Հավելված 2. Բողոքներ, որոնց մասին gnumner.am-ում կայացված որոշումներ չկան**

Բողոքի ստացման օրը	Բողոքող	Պատվիրատու	Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան	Բողոքի պահանջը
26-04-16	«Առվա Երկիր» ՍՊԸ	ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԸԱՇՁԲ-10/13» ծածկագրով սահմանափակ ընթացակարգ:	«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԸԱՇՁԲ-10/13» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2016թ. թիվ 3 արձանագրության 2.2 և 5.1 կետերով կայացված «Առվա Երկիր» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու պահանջի մասին:
17-05-16	«Հ.Ս.ՊՌՈ» ՍՊԸ	ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԸԱՇՁԲ-10/7» ծածկագրով սահմանափակ ընթացակարգ	ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԸԱՇՁԲ-10/7» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության կայացված որոշումը չեղյալ հայտարարելու և «Հ.Ս.ՊՌՈ» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու պահանջների մասին:
30-06-16	«Աշխատանք» ՍՊԸ	ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԸԱՇՁԲ-10/20» ծածկագրով սահմանափակ ընթացակարգ:	1. Դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԸԱՇՁԲ-10/20» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.06.2016թ. ժամը 11:00 թիվ 3 արձանագրության 2.1 կետով կայացված որոշումը «Աշխատանք» ՍՊԸ-ի մասով և որպես հետևանք դադարեցնել նաև գնահատող հանձնաժողովի կողմից «Աշխատանք» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը: 2. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԸԱՇՁԲ-10/20» ծածկագրով սահմանափակ ընթացակարգը և գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած ցանկացած որոշման իրականացումը:
18-07-16	«Արվատեկ» ՍՊԸ	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	ՇՀԱՊՁԲ-15/3-3-2016թ.(ԵՊՀ)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), գրենական պիտույթների և գրասենյակային նյութերի ձեռքբերում	Դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.05.2016թ. «Արվատեկ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը, իսկ տվյալ պահանջը չբավարարելու դեպքում՝ Ընթացակարգը հայտարարել ապօրինի:
21-07-16	«Ագարակ» ԲԲԸ	ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԸԱՇՁԲ-10/22» ծածկագրով սահմանափակ ընթացակարգ:	1. Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԸԱՇՁԲ-10/22» ծածկագրով ընթացակարգի թիվ 3 արձանագրությամբ «Ագարակ» ԲԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը, 2. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԸԱՇՁԲ-10/22» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու մասին որոշումը:

15-08-16	«Համախոհ» ՍՊԸ	ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԸԱՇՁԲ-10/26» ծածկագրով սահմանափակ ընթացակարգ	<p>1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԸԱՇՁԲ-10/26» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած բոլոր որոշումները, այդ թվում նաև պայմանագիր կնքելու որոշման իրականացումը:</p> <p>2. Դադարեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՍԸԱՇՁԲ-10/26» ծածկագրով սահմանափակ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հուլիսի 27-ի ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2.1 կետով «Համախոհ» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու մասին որոշումները, ինչպես նաև նույն արձանագրության 2.1 կետի 2-րդ ենթակետով կայացրած որոշումը:</p>
14-09-16	«Խաչպար» ՍՊԸ	«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ	«ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), բժշկական նշանակության ապրանքների և սյուրերի ձեռքբերում	1. Այսօրինի հայտարարել «Նորք-Մարաշ» ԲԿ» ՓԲԸ-ի և «Մագտոնի» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի 52-րդ չափաբաժնի մասով: